



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեննել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ա. ՎԱՂԻՄԻՐՍԿԻ

ԶԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՔԸ

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾՔ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1929



№

ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ


№

ՎԼ. ՎԼԱԴԻՄԻՐՍԿԻ

ԶՄՐՈՒԻԽՏԻ ՀԱՆՔԸ

Փոխադրեց Մ. ԴԱՒՐԴԱՐՅԱՆ

16835
A II
38901



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1929



Եւոյ և անսում Սոցդապլիսվահուրյան կից գործող Մամիկոն
կան գրականուրյան Հանձնաժողովի հավանուրյամբ

№ 43

ԹԵՏՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՄԱՐԱՆ
ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Հ. Ա. 931 Պ. Ա. 195

Տիրաժ 2.500

Գրառեսվար Ա. 1705 թ.



ԶՄՐՈՒԽՏԻ ՀԱՆՔԸ

I

Ուրաբան լեռների փեշերի տակ փոված և Ռպալիս
գյուղը

Հովտի ծոցում հոսող փրփրուն գետակը լիզում և
քարքարոս ափերն ու քանդելով տանում և իր սառն
գիրկր գեղին ավազն ու գորշագույն հողը:

Ա իհրը ծածկված են կուսական անտառներով.

Տեղաբեր բլրների տակ, գետակի ակունքների մոտ
տեսնում ես գետնի բաց լեռախը, վորի պատովածքը տա-
նում և ներքեւ դեպի Ուրալյան թանկագին հանքերի ծոցը,
ուր թաղված և ԽՍՀՄ հաղվագյուտ հարստություններից
մեկը - թանկարժեք գրուխարը, վորի բյուրեղների կանա-
չավուն փալը շացրել և պորտաբույծ բուրժուաներին և
ընչասեր վաճ սռականներին:

Թանկ և զմբուխարը, սակայն ավելի թանկ են այն
սոսկալի գժվարություններն ու ծանր աշխատանքը, վո-
րով ձոռք են բերվում այդ քարերը: Ռպալիխի բնակչու-
թյունը, հանքերում ապրող հարլուրավոր բանվորները լավ
գիտեն այդ՝ լեռկարատև ծանր աշխատանքը հանքերի խոր-
քում, ուր ցերեկը գիշեր և դառնում, իսկ հանքահորից
դուրս գալը գիշերվան և զուգաղիպում, հյուծում և բան-
վորներին: Աշխատանքն ավելի և դժվարանում շնորհիվ
այն ստորյերկրյա ջրերի, վորոնք հոսում են շերտերի
միջով, և վորոնցից առաջացող աղետը կանխելու համաց
անընդհատ գործում են ջրհանձեքնաները:

Արդ հանքերում եր աշխատում Վանլաի հայրը, դիսակից բանվորներից մեկը, վոր անհամբեր սպասում եր իր փորդու՝ Վանլաի մեծանալուն, վարպետի իր հետ միտափն բաժանի. ծանր աշխատանքը:

Վանլան այսոր տանական արամադրությամբ վեր կացավ. այսոր նա լրացնում ե իր տանյերկու տարին: Նա հաղարտությամբ անցավ Մատվեյի ու Սենեկայի կողքով, վորոնք միայն տասնմեկ տարեկան եյին:

Վանլան քանի անքուն զիշերներ եր անցկացըել, սպասելով յերբ պետք ե նստի զամբյուղը, վորը մեքենայի ուժով բարձրանում ու իջնում ե հանքանըրը, աևդ սփոխելով հանքադորձներին: ԱՌ յեթե նա բանվոր գառնա ինչպես կոզնի հորը, իր առճիկով կրավարարի մարդիկի և փորբիկ քրոջ բոլոր պահանջները: Կարառֆիկ, կաղամբ շոր, գրգիր ու կարկանդակներ կառնի:

Վերջապես շարժվեց զամբյուղը, և Վանյուշան իջավ վերքե, ինչպես մութ ու խոնավ եր. նա րոնից հոր փեշից, փակեց աշերը, քամին լիզում ե նրա յերեսը. Ջրի կաթիւներ զգաց իր ձեռների ու ալտերի վրա: Իսկ զամբյուղը թռչում ե ներքե:

Վերջապես հասան. բանվորները սիրով ընդունեցին նրան. զիտեն, վոր Յերեմիչի վորդին ճարպիկ ու աչքաբաց տղա կըինի:

Յեվ Վանլան սկսեց աշխատել, նա անհամբեր սրտով փնտում եր այն փոքրիկ թանկագին հատիկները, վորոնք ցրված են կեղտոտ շերտերում և վորոնք անճանաչելի յեն դառնում, յերբ դուրս են գալիս հանքերից և համսում դործարան. այնուհետև այլևս չեն տեսնիլ այդ քարերը:

Վանյան յեռանդով աշխատում եր հոր հետ: Նա հոգ-

նուռն եր ծանր ալխատանքից, բայց չեր ձանձրանում, ամեն որ նոր հետաքրքրություններ աեսնելով հանքերում:

II

Սակայն բոլորն ել գիտեն, վոր յերկար չի տևելու այդ զբությունը: Այնքան վաս եր բանվորների վիճակը, վոր նրանք միայն ուրախացան՝ սպասվիլիք փոփոխությունների նկատմամբ:

Պատերազմը տակն ու վրա արեց Ռպալիս դժուղը: հաց ու կարտոֆիլ չեր ճարվում, փողի պակասությունն եր: Պետք եր զոռ տալ աշխատանքին:

Հաջքերում զբությունն անհանգիստ եր շշակները սուլում ելին շրջակա լեռնահանքերում: հանքափորերը խռոված սրտով թողնում ելին դորձն ու զրույցի հավաքվում:

Գոտկած փորերը հաց ելին ուզում, փող չկար, հաց ճարելը հեշտ չեր:

Բանվորները հավելում ելին խնդրում: հանքատերերն առարկում ելին, մերժում: Բանվորները թողնում ելին աշխատանքը, մտնում ելին ըներն ու չարությամբ նայում ելին դեպի տերերի ու կառավարչի տները:

Մեկ-մեկ բանվորները վերցնում ելին քլունդներն ու ժահակները և գնում ելին հանքերն ավերելու:

Քաղաքից կազակներ *) յեկան, ծեծում ու բռնում ելին խռովարաններին:

Ալսպես ել Ռպալիխում: գետնահօրերում հավաքվում ելին բանվորները, շպրտում ելին դործիքներն ու սկսում խռովել անցուղարձից:

*) Ռուսաստանի մեծ գետերի հովտում ապրող բնակչություն, ցարական բանակում կազակները հատուկ զորամասեր ելին կազմում (հեծելազոր):

— Եսոր թե եզուց, մինույն ե, ալստեղից դուքս
չենք գալու. ձեսներումն հալ չկա. փորներս քաղցից
կողել ե մեջքներիս:

— Զարժե այսպես ապրել,—ասում եր մյուսն,
հաղալով ու թքելով:

— Նրանք չեն խնայում մեղ, ողանցքներ ել չեն
շինում, մեր վարձն ել չեն տալիս:

— Չեն տալիս. այլ պիտի տա հանքատերը Ֆրան-
սիայում նստած փողերն ստանում ու քեֆ ե անում,
յուղի ու մեղրի մեջ լողում:

— Բա կառավարի՞չը.

— Կառավարիչը. սատանի ճուտը հոգին ծախել ե.
Նրան ինչ. նա ել հանքատիրոջ պես մի բուրժուզ յե. մարդ
ես գտել դու յել:

Վանկան լսում եր այս բոլորն ումիտը պահում, հենց
վոր հարմար ժամանակ եր գտնում, հարցնում եր հըը,
դևսից-զենից: Քիչ-քիչ հասկացավ ամեն ինչ. կառավարչի
երեխաներին հանդիպելիս, սիրտը ալրվում եր:

— Մեր արյունով յեն կշտացել,—մտածում եր Վան-
յան, տեսնելով նրանց լստիկ ձեռները:

Քիչ եր մնում բռներ նրանց ոձիքից, տաներ, իջե-
ցներ հանքերի խորքն ու ասեր.

— Դե, մի տես՝ վոնց լենք չարչարվում:

Հանքերում հուզմունք եր տիրում, կարծես հրդեհ եր
բռնկվել, վոր սպառնում եր գուրս գալ հանքերից ու
լափել շենքերն ու պալատները:

— Խսչ անենք, մեր զնանք, վարն ե փրկությունը,—
լսվում եր բոլորի բերանից:

Յեվ հանկարծ մեկը ձայն տվեց.

— Զհանդամը... թողնենք աշխատանքը.

— Թողնենք...

— Թողնենք,—արձագանք տվեց հանքահորը, և մի վայրկյանում ամեն ինչ շուռ յեկավ:

Դեռ շչակը չեր սուլել, վոր բանվորները, զամբյուղները լցված, դուրս ելին գալիս նորից:

— Քաշի՛ր... կանգնի՛ր... դուրս յեկ, — գոսում ելին այս ու այն կողմից:

Ցեվ չարացած դեմքով լույս աշխարհ ելին մտնում:

Ցերկար խոսում ելին. կառավարչի հետ բանակցելու համար պատգամավորներ ընտրեցին. մարդիկ նշանակեցին հարեւան հանքերի հետ կապվելու համար: Վանյախ հոր մոտ՝ տանը, հավաքվում ելին ընտրվածները. մտածում ելին՝ ինչքան և ինչքես պահանջեն, ինչ պայմաններ դնեն: Վանյան միշտ ներկա յեր լինում ժողովներին նրանից բան չելին թաղցնում. զիտելին, վոր նա գաղտնապահ ե: Նա պետքական տղա լե, խելքը գլխին ե:

Գործադուլը ձգձգվեց. առաջարկները չանցան: Քաղաքից զորք յեկավ. շրջապատեցին դյուզը, փակեցին հանքի մուտքերը: Կառավարիչը քաղաքից նոր բանվորներ բերեց, այս բանը լսելով, բանվորներն ավելի զայրացան. ժողովներում տաքանում ելին, սպառնում:

Հայրը տուն յեկավ մոալ, նստեց ու մտածում եր, վատ լուրեր հասան, — նոր բանվորներ են յեկել, կրոնեն տեղերը. գործադուլը կըվիժի...

— Ինչ պետք ե անել, — այս միտքը դուրս չեր գալիս գլխից:

Միայն ուշ գիշերին մի բանվոր մոմոաց:

— Հեղեղել հանքահորը. թող վոչ մեղ լինի, վոչ նրանց: Մի լավ մնասվեն, հետո կհանձնվեն:

Այս միտքը գուր յեկավ. լավ միջոց ե. բայց ինչպես
հեղեղել. բոլոր մուտքերը պաշտպանված են:

Վանյայի ականջին հասավ. կատավի պես գուրս պրծախ
հաշար, յերկար մտածում եր.

— Դրուստ ե, պիտի հեղեղել... պետք ե ոգնել
բանվորներին... մուտքերը բռնված են...

Բայց Վանյան զիանը մի գաղանի մուտք, վոր նա
տեսել եր, յերբ նոր լազարերը ձեռքին առաջին անգամ
հոր հետ հանքահորն իջավ ու նրանցից գաղանի զնաց
արջերու:

Նա զիտե ալդ անցքը, և կարսող ե ոգնել:

Վերցրեց թոկը, ըլունքն ու լապտերը և դուրս պրծախ
տնից, կանչեց յերկու վատահելի տղաների ու հարցրեց.

— Ու զում եք ոգնել մերոնց,

— Ինարկե,

— Դե յեկեք իմ յետեից,

— Բայց, ինչո՞ւ,

— Մո, հետո կիմանաք,— շշնջաց Վանյան, ու հանք
գնացին:

Զուր չեր, վոր նա շրջել եր հանքը, զիտեր ամեն
ծակուժուկ, զիտեր Ալուդները, Ջրատար խողովակները.
Կշըլի ծորակն, ու պատրաստ ե, ջուրը ներս կլցվի:

Ծրագիրը լավ ե: Վանյան մոտեցավ հին զամբլուղին
և ապեց թոկն ու սանդուխով ներըն իջավ, սանդուխը
ճռճռում ե, փտած մատները վոաի տակ կոտրվում են,
բայց Վանյան վստահ իջնում ե, նա զիտի, վոր թոկը
պիստ ե, վերեռում պահակներ կան, իսկ յետեռում վողջ
զլուղն ե կանգնած պետք ե ոգնել զլուղին, և Վանյուշան
կողնի:

իջնում ե, մնաց մի՛ աստիճան, հիմի գետնին կհամնի:

Թը՞րմբ, - և Վանլուշան վոսկեց գեանին. կողքը ծազում եր, զլուխը դժմում, անցնում ե մեկ-յերկու ռոպե, վեր ե կենում, զնում ե. ձերի լապտերի աղոտ լույսի տակ յերեսում են վոլորապտույտ անցքերը, խաչեր են պատահում. ահա մի բացվածք, սողում ե ներս, միջանցքներ, ահա մի ճանապարհ, ահա մուսար:

Չի լսում մուլճերի ձայնը, լոռությունն ե պատել շուրջը:

Վանյան սարսում ե, ուզում ե յետ գառնալ, նրա մեջ պայքարում են վախն ու պարտականությունը. վախը յետ ե պահում, պարտականությունն ասած ե մզում: Պետք ե կատարել, և նա վճռում ե, —կատարել, ինչ ել վոր լինի:

Ականջին հասալ ջրի կաթեթոցը: Ահա ջուրը վեր հանող խողովակները:

Վանյան փնտում ե ծորակը. գտավ:

Յեթե բաց անի, ջուրն ել վերև չի բարձրանալ, կը-լցնի միջանցքները և կհեղեղի վողջը:

Չեռը գցում ե ծորակին, դողում ե, վրալից սահում. Վանյան սեղմում ե պինդ, չի շարժվում, ժանդոտել եւ վերցնում ե մուրճը, խփում, —թիկ. թակ:

Յեկ միջանցքում հնչում ե ձայնը, —թիկ. թակ:

Ու արձագանքը զնում, կորչում ե հեռուն:

Ծորակը պտտվեց, մեկ ել: Խողովակի արմունկը ծռվեց, ահա բացվածքը, ջուրը խփում ե շատրվանի պես, անցըը մեծանում ե, ջուրը վազում. թիչ անց—ջուրը շլյուզներով հոսում ե դեպի պատերը, խփում ե նրանց: Վանյան վեր թռավ, ցատկեց, բայց վրիպեց,—ջուրն ընկավ:

Սառը ջուրը զրկեց Վանյացին. պետք է լողալ. ձեռները գործում են, բայց կծկվում սառը ջրից. մտանեռը փետացել են: Ճգնում ենորից. զրոխը կպավ շերտերին, ցալեց. Աչքերը մթնում են. կարմիր ու կապույտ բժեր են յերեսում:

Ջեռներն ել չեն շարժվում, ուժ չի մնացել. քունը տանում է. ջուրը բարձրացնում է նրան, տանում, գցում է վերև, միջանցըը:

Անցնում է ժամանակը, տղաները վերեսում անհանդուսնում են. վորոշեցին զնող՝ հորն իւմաց տալ. մեկը մնաց հոկելու:

Քիչ-քիչ պարզվում է Վանյալի միաքը. մի ինչ վոր սարսափ անցել է. նորից ուժ է գալիս:

Բացեց աչքերը, կանցնեց — վոտները ջրում նալում ե, հիշում վորտեղ է ինքը: Սա, վերեի միջանցքն ե: Պետք է շտապել: Թէ միքիչ ել դանդաղի, ջուրը կըռնի նրան և այն ժամանակ... սարսափ է անցնում մարմնով: Վանյան վազեց. ջուրն ել յետեից՝ լիզում է կրունկները՝ ահա մյուս հանքահորիանցքը, ներս սողաց փակեց անցքը ահա և թոկը, քաշեց:

— Վանյուշա,

— Հա...

— Դու յես, փառք աստծու, — լսեց նա — բռնիը, վոտքդ դիբ ողակին: այ ալդակես. դե շարժվիր. զուրս քաշեցին թրջված, կապտած Վանյալին. բակերի կողքով տուն տարան նրան, մերկացրին ու վառարանի մոտ պատկեցրին:

Իսկ ներքեսոմ հանքահորում ջուրը, քանդելով ավազըն ու շերտերը, հոսում եր միջանցքներում, ողահան մերենաները ջուր չելին ցալտում, այլ ողով ելին փնչում:

Հերթականները նկատեցին: Վարպետները ներս վաղեցին: Զամբյուղը գետին չհասած կանգ առավ.—նրատակը շրմիաց ջրին:

Ցետքաշիր,—լսվեց մի անհանդիստ ձայն, Զամբյուղը վեր բարձրացավ:

Բոլորի համար պարզ եր—հանքահորը հեղեղված եր, այս լուրը կայծակի նկես տարածվեց վողջ գյուղը: Հանքերի վերատեսուչը լեկավ այլայլված, վերակացուն դես ու դեն եր վաղվզում, հեռախոսն անընդհատ զնդզնգում եր. մեկն ասում եր վախեցած:

— Անհրաժեշտ ե կանչել վոստիկանապետին *). բանվորներն սպառնում են ավիրել. հանքը հեղեղված ե:

Ո՞վ և հեղեղել:

Ով կարող եր ասել. հայտնի յեր միայն վանյալի յերկու ընկերներին ու հորր: Առավոտը վաղ հասավ վոստիկանապետը հարց ու փորձ եր անում, հանգամանքները պարզում, բայց և այնպես վոչինչ չալարզվեց:

Մյուս որը պատգամապորներին ու բանվորներից շատերին ձերբակալեցին, շաղաք տարան.

Վերատեսուչը գնաց:

Հանքահորը լուեց:

Լուեց և Ռուլիսա դյուղը:

III

Գյուղում կյանքը մեռավ, առավոտներն ել չեր շնում սուլիչը, չեր կանչում գործի: Կես տարի անց միայն

*.) Յարական կարգերում վոստիկանները հսկում եյին կարգապահութեան. սրանց մեծը կոչվում եր վոստիկանապետ (պալեցմելստեր):

ջուրը զուրս թափեցին, հորը մաքրեցին զամբուղն սկսեց
բարձրանալ ու իջնել, բանվարներն սկսեցին զնալ-զալ:
Միայն բանտում նստածները չեն յերեսում հանքերում:

Վանդան ել իջավ հանքահորը, հայրը հետք չեր, առա-
ջին որը նա սկսեց գիտել իր յեղած տեղերը, հիշում եր,
յերք բացում եր ծորակները ու մնացել եր պառկած:
Ծանր ելին հիշողությունները, շուտով գործի անցավ նա-
Յերկուսի տեղ եր աշխատում իր և հոր: Աշխատածը չեր
բավականանում սոված եյին մնում:

Որերը առքացան, արել մեկ-մեկ ալլում եր: Սու-
պատճերը արևելքը բոցավավում եր ու ալ-կարմիր գույ-
ները տարածում հեռու, հեռու:

Զալնեցին թոշունները, առավտաները սկսում եյին
իրենց ծլվոցը և ճլուղից ճյուղ ցատկում: Կաթիլները կպչում
եյին լուսամուտներին ու զրնդում:

— Ճլթ-թըկ, ճլթ-թըկ,—կարծես ասում եյին.

— Յեկավ գարունը, յեկավ գարունը:

Յերեխաները գ ւրս սողացին բներից, ձնագնդին
թնդում եր: Մենակ վանդան չեր կարողանում զուրս
դալ ու խաղալ, ցերեկն աշխատում եր, գիշերն՝ հանդը-
տանում, զիրք կարդալ ել եր պետք: Գիրք շատ եր
սիրում, իր սուղ աշխատավարձից բաժին եր հանում,
բաղաքում զիրք զնում:

Այսպես անցնում եյին որերը:

Մարտի վերջին միայն լուրեր յեկան, տարածվեցին
հանքերը, անից-տուն, գյուղից-գյուղ եր անցնում:

Ուրախ լուր եր, պայծառ՝ մարտի արեի պես:

Զեյին հավատում ալս լուրերին, հավաքվում ելին,
խոսում, վիճում:

Վանյուշան դես ու դեն եր վազում, տեղեկություններ եր հավաքում. ամեն տեղ, բոլորը միացն մի բան եյին ասում:

— Թագավորին քշել են: Վոստիկաններին՝ ցրել Վանյան տեսավ—հանքերի պահակները խեղճացել են, ձեն-ձուն չեն հանում:

— Եհ, մայրիկ, հայրս կդա, լաց մի լինի, քիչ մնաց: Ցեկավ հայրը մի որ, ճաշին, յերբ նրան չելին ել սպասում, յերբ Վանյան հանքում չոր հաց եր կրծում, յերբ մայրը ջրով սպաս եր յեփուս:

Պատգամավորների ազատվելը բանտից մեծ իրարանցում առաջացրեց—անվերջ ժողովներ, խորհուրդների ընտրություններ:

Առաջնորդներ ընտրեցին պատգամավորներից—փորձաված տղերը ելին: Կյանքը լեռաց:

Վերատեսուչը կակդեց: Զիջումներն սկսեց:

— Կյանք չի, խող ու պար ե, - ծիծաղում ելին բանվորները:

— Կորիվը նոր ե սկսվում, յերբ բոլոր բուրժուացներին կստիպենք աշխատել՝ նոր միայն կհանգստանանք, ասում ելին մյուսները:

Վանյուշան միտք եր անում իր հոր հետ՝ ինչ կլինի վերջը:

Անցավ գարունը, ամառը՝ կարծես թե խաղաղ եր, ամեն ինչ առաջվա պես: Նըանց զբությունը դեռ չեր լավացել:

Աշխատում եյին, մեջքերը ծոռում, ստացածները կոպեկներ ելին:

Պատրին թղթեր եր կպցրած «Պատերազմ» մինչեւ հաղթությունն», ջահելներին ելի կորիվ են տանում, մա-

րերը հորից լացով ճանապարհ ելին զցում զախակներին։
Աշնանը, յերբ անձրեն ու քամին դռներն ելին ծեծում,
իսկ յեղե իները վռոնում ելին վողբաձայն, ուշ զիշերով
մի լուր յեկավ։

Պայծառ ու ալրող լուր,

Հեռու, սարերից զենը, Մոսկվայում ու Պիտերում
կոխվներ ելին սկսվել։

Կոխվ բանվորների ու կառավարության մեջ, լուրի ըլ
փոխփում ելին արագությամբ, մեկ ուրախալի, մեկ ել ան-
հանգիստ լո բեր։

Ս կայն հաղթեց ուրախալին, յերբ ձյունով ծածկվե-
ցին լուսների լանջերը, բոլորի համար պարզ եր մի բան-
— իշխանությունն անցել եր բանվորներին ու գյուղա-
ցիներներին։

Հողը — գյուղացուն, հանքերն ու գործարանները —
բանվորներին։

Յերկրի տերերն ելին — Խորհուրդները Գիշերը հնչեցին
սահնակի զանգակները, բայց վոչ վոք ուշադրություն
չդարձրեց, իսկ առավտան յերբ գնացին վերատեսչից
գործերն ու թանկադին քարերն ստանան — վոչ վոք
չկար։

— Սատանանե՛ր, փախել են։

— Զնանդամը, թող գնան։

— Պետք ե բռնել, — ասավ Վանլան, — խեղճի ձեռները
քոր ելին զալիս։

Վերատեսչի տունը ակումբ դարձավ. իրիկուններն հա-
վաքվում, խոսում ելին անցուղարձի մասին։

Մեկ որ, Վանլան փափսաց հոր ականջին։

— Լսիր, հայրիկ, մազ յերկու սենյակ ե պետք։

— Ո՞ւժ.

— Տղերանց.

— Իսշմւ.

— Ուզում ենք միություն կազմակերպել. սովորել
ենք ուղղում, թե չե, ինչ—տղետ ենք.

— Այ խելքը միտք. դե լավ, կաշխատեմ. և աշխա-
տեց. սենյակ տվին. տղաները զարդարեցին սենյակը.
գրքեր ձեռք բերին ու—սկսեց աշխատանքը: Վանյուշան
զլխափորն եր՝ հենց մի զլուխ—

— Տղերք, պետք ե մտածել, ինչպես աշխատենք.
մեծերին հավասար աշխատում ենք հորերում,—ստացած-
ներս՝ կոպեկներ են:

— Դրուստ ե, —զոռում են տղերքը:

Վանյուշան կդրի բոլորը, Գործկոմ կզնա:

— Ահա մեր պահանջները, կարգադրեցիք, — կասի:
Յեվ կանի. կոկորդը կճղի, բայց կհամոզի, վոր պատանին
չի կարող լիրկար աշխատել, որդանիզմը զեռ թուլ ե,
թոքախտ կնկնի, և ելի շատ ուրիշ որինակներ կբերի:

Տղերքն սկսեցին գետնի տակ ավելի քիչ աշխատել և ա-
վելի շատ փող ստանալ: Քաղաքից հաց, կարտոֆիլ, չիթ
բերեցին հանքերը: Քարտերով ելին բաժանում:

— Այ թե ինչ բան ե Խորհուրդը...

— Այ թե ինչ ե նշանակում իր գլխի տերը լինել, —
կըկնում ելին փոքրիկները զպրոց հավաքվելիս՝ բանվոր-
ների խոսքերը: Տեսան նըանք, վոր ակումբը միացնում ե
իրանց, ավելի սերտ կապվեցին ակումբի հետ, և վելի հա-
ճախ ելին հավաքվում այնտեղ ու գրքեր կարդում: Այժմ
Վանյան լավ զիտեր ո՞վ ե բուրժույլը և ո՞վ՝ պրոլետարը
Գիտեր ինչի համար են նըանք կովում իրար դեմ:

- Քաղաքից մի յերիտոսարդ յեկավ, վոր Վանլալից
քիչ մեծ եր:
- Մենք պատկոմներ*) ենք, — առում եւ
 - Իսկ ի՞նչ բան ե պատկոմը.
 - Այդ նշանակում ե՝ պատօնի կոմունարներ—անա
թե ի՞նչ:
 - Իսկ մենք չե՞նք կարող պատկու դառնալ,
 - Վոչ գեռ, փոքր եք. բայց կարող եք պատրաստ
վել, յես զրա համար ել յեկել եմ ձեղ ոգնելու:
 - Այ լով ե—առում եր Վանլան. — թե չե ի՞նչ:
նման ենք մենք այս խուլ անկյունում. Ձես իմանում—
ի՞նչ անես: Նստում ենք ու մտածում, թե եղուց ի՞նչ ենք
անելու: Արտոնեան լով կրինի. նոր մարդ ե, գործն ա-
ռաջ կդնա: Յեվ ճիշտ վոր գործն ավելի կենդանացավ:
 - Վանլան շատ ուրախ եր: Աւի նման թոչկուում եր:
Փողոքում վոքրիկներին հանդիպելիս բռնում եր ու ա-
ռում:
 - Արի մեղ մոտ ակումբ.
 - Գամ ենտեղ ի՞նչ անեմ.
 - Ի՞նչ. այ արի՛, կիւմանաս: Քաղաքից ընկեր ե յե-
կել, նորություններ կիմանաս. Յերեխաները վագեցին նոր
յեկածին լսելու: Իսկ նա պատմում եր, թե ի՞նչպես են
յերեխաներն ուրիշ յերկրներում հետախուզդների և սկա-
ռումների **): Խմբեր կազմակերպում, միայն հարկավոր ե,
վոր ալդ խմբերում բանվորական մարտական վողի լինի
և վոչ թե բուրժուական:

*) Պիոներներ

**) Այսպես են կոչվում բուրժուական յերկրներում պատօ-
նեկան միությունները:

Յեվ գլուղի լերեխաները կազմեցին իրենց ջոկատը.
Յերկար մտածեցին ինչ անուն տան նրան և վորոշեցին
«կարմիր հետախուզվներ» անվանելու Քաղաքից յեկած պատու-
կոմը նրանց բացատրեց այդ խմբերին վերաբերյալ կանոն-
ները, ուրիշ շատ ոգտավետ բաներ սովորցրեց ու գնաց:

Տղերը վողմորությամբ գործի անցան, խմբակներ
կազմակերպեցին:

Ես գործը Վանդալին շատ գուք յեկավ,

Կազմեցին մի վաշտ և Վանդալին ընտրեցին ավագ:

Նա փորձված ե, ճարպիկ Կնայի լերկինք ու կասի,
թե վաղը ինչ լեզանակ ե լինելու կիմանա՝ վոր կողմն և
հյուսիսը և վորտեղ՝ հարավը:

Նա բոլոր արհեօտները լսվ գիտի. Ուր առես՝ կդնա,
Ուզես-չուզես նրան պիտի ընտրես զեկավար:

Թանի գեռ խոնավ եր հետախուզվներն ակումբում ե-
րին սովորում: Մանոթանում եյին՝ ինչ և կարմիր հետա-
խուզը: Խմբակներում լերկար նստելով մաքներումը պինդ
պահում ելին, վոր— «Կարմիր հետախուզը բոլոր լերկրների
ըանվորների ու գյուղացիների բարեկամն ե: Բանվորա-
գյուղացիական իշխանության առաջին ոգնականը»:

— Առաջին ոգնականը:

— Հեղափոխական գործի համար միշտ պատրաստ:
Յերբ նրանց ասում ելին.

— Կարմիր հետախուզվ, պատրաստ,—ժպտերես պա-
տասխանում ելին:

— Միշտ պատրաստ:

Այդ անունը նա սիրում եր: Յեվ լերը Վանդալին բա-
րեկում ելին, նա առանձին սիրով ու հաստատակամ պա-
տասխանում եր:



— Միշտ պատրաստ:

Զմբան ցեխերին նստեցին նըանք տկումըում և ոռ-
փորում եցին կարմիր հետախույզների պատվերները: Հենց
փոր լուսը բացվում եր, Վանդան վստրի վրա լեր՝ վեր-
ցնում և մի փալաս տաշտակի ջրի մեջ թրջում: Մեկ—
յերկնւ, սառը շորով մարմինը շփում: Ա՛ սառն ե, մարմինո
կապտում ե, հետո կարմրում, ալրվում, մինչև վոր հողնում
ե: Սրբեց, սկսում ե ձեռքերով ու վստրերով զանազան շար-
ժումներ ու ձեեր անել: Մայրը նայում ե, փոթկացնում:

— Եղ ի՞նչ ե ավարա, լույսը չբացված պար ես գա-
լիս: Անաստված, աղոթիր ու նստիր:

Իսկ Վանդան պատասխանում ե.

— Եղ պար չի: զա մարմնամարզություն եւ Զանս
եմ պնդացնում,

— Պնդացնում ես: աստծուն միտադ բեր, Եղ ավելի
լավ կլինի.

— Են մայրիկ, ենքան աղոթել եմ ճակատո մաշվել
ե, դրանից ոգուտ չկա:

— Ի՞նչ.

— Վոչինչ, առողջությունդ. վաղ արի մայրիկ: Մայրը
փնթ-փնթում ե, իսկ Վանդան իր մարմնամարզությունն ե
շարունակում:

Հարկավոր ե միշտ մարմնամարզությամբ զբաղվել.
այդպես ե պատվերը:

«Առողջ հոգին առողջ մարմնի մեջ»:

Մարմնամարզությունից հետո լվացվում եւ Բերում ե
տաշտը ու լվա հա լվա՝ ականջները, վիզը, քիթը:

Յերբեմն այնպես ե ցրվում ջուրը խոհանոցում, վոր
մայրն ել չի համբերում մի լավ ուտացնում ե:

ինչ ես անում, շան լակոտ, գետումն ես ինչ ե,
վողջ ջուր արիր:

Իսկ Վանյան ձեն չի հանում. նա գիտի, վոր
հարկավոր ե լավ լվանալ ձեռքերը, ականջները, վիզը.
մաքրությունն՝ առաջին տեղն ե, նրա ընկերները հին սո-
վորությամբ փալտը ձեռներին շների հետեից են ընկնում:
Վանյան նրանց հետեից վազում, վզներից բռնում ճակատ-
ճակատի յե խփում ու հարցնում.

— Ցավում ե.

Ցերեխաներն արցունք են քամում:

— Ցավում ե ե.

— Շունը կենդանի՝ յե.

— Կենդանի յե.

— Նա արլուն ունի.

— Ունի.

— Խփես արլուն կգնա.

— Կգնա.

— Ցել կցավի.

— Կցավի.

— Հապա ինչու յեք նրանց չարչարում:

— Մենք... հենց ենպես.

— Տեսեք, մլուս անգամ վոր բռնեմ հոգիներդ կհանեմ:

Ցերեխաները հեռանում են, նալում նրան և ասում.

— Զարմանալի տղա յե դառել վանյան: Շների հե-
տեկից չի ընկնում, ձու չի զողանում. ինչ ե պատահել
նրան.

Վանյան այժմ իր գիտցածը սովորեցնում եր նրանց.

— Կարմիր հետախուլղը՝ կենդանիների և թռչուն-
ների բարեկամն ե:

Այ թե ինչու նա չի չարչարում շներին, կատաներին
և թռչունների ձվերը չի դողանում:

Յեվ հետո լիլ՝

— Մենք պիտի խմանանք ինչպես են ապրում մեր
ընկերները:

Յեվ Վանդան ամբողջ զիշերներ նստած կարգում եր,
թե ինչպես են ապրում պատանի ընկերները Գերմանիա-
յում, Ֆրանսիայում և Անգլիայում:

— Կարմիր հետախոսյզը—առաջինը պիտի ողնու-
թյուն հասցնի:

Յեվ յերեխաները Վանյալի զլիավորությամբ ամենից
շուտ են հասնում, հենց վոր ողնության հրավեր են
լսում:

Բոլոր պատվերները, բոլոր ձեերը՝ ինչպես ման գալ,
ինչպես կամուրջներ շիներ, անցնել զետը...: Ամեն բան
սովորել եյին, գիտեցին նաև ազգանշանները՝ ինչպես իրար
իմաց առն, ինչպես խոսեն զրոշակներով, կրակներով:
Յերկար ձերանից յերբ աղատվեցին, յերեխաները դուրս
յեկան սար ու գալա, լաստեր եյին շինում և զետերն անց-
նում: Կարմիր փողկապն ամեն տեղ փայլում եր: Նշան-
տուքի զրոշակներն ամեն տեղ ծածանվում եյին: Պայմա-
նական նշանները միշտ շուրջներին երք Պատահում եր,
իրարից հեռու նստած մի բան են ուզում ասել իրար,
բայց ծուլանում են: Իսկույն ձեռքները բարձրացնում
են, ողի մեջ կորճ ու յերկար նշաններ են անում և լուռ
խոսակցությունը պատրաստ եւ:

— Մեմյոն, գնանք լողանալու.

— Զեմ ուզում.

— Գնանք զկեռի.

— Զեմ գալիս.

— Բա ի՞նչ ես ուզում.

— Գնանք ակումբ.

Յեվ ելի ամեն մարդ իր գործին եր անցնում: Գիշեր-ները փոքրիկ լապտերներով են խօսում:

Սպիտակ դուքնը մի նշան ե, կապուտը մի ուրիշ: Զարմանալի վարժվել են, ժամերով կարսղ են խօսել:

Ամբողջ ճառեր են արտասանում: Իրիկները տղերքը հավաքվում են կրակի շուրջը և դեսից-գենից զբույց անում, հեքիաթներ պատմում: Վաշտը բաժանվել է խմբակների: Վարժություններ են կատարում: Գոհ են: Հայրերը նախում են վորդիներին և ուրախանում:

Մեկ ել տեսար մարդ դառան,—ասում եյին նը-րանք, նայելով վորդիներին, յերբ նըրանք աշխատում ու սովորում եյին և աշխարհի խերն ու շառը իմանում:

IV

Յերկար չուեց յերեխաների զվարճությունները և զբոսանքները սարերում ու անտառներում:

Արեւելքից, սարերի փշոտ ստորսաներից լավ խարարներ շելին գալիս: Սպիտակները շարժվում ելին, կալվածատերերը նորից հողերն եյին յետ խլում, զործարանատերերն՝ իրենց զործարաններն ու հանքերը: Բոլոր խորհուրդայիններին, կոմիտելի անդամներին գնդակահարում ու կախում եյին:

Ուղալիխին ել հասավ հերթը:

Ամբողջ զյուղը և շրջակա հանքերը իրարանցման մեջ եր: Շտապով զրվում եյին կարմիր բանակ, ուազմական գործին ելին վարժվում:

- Փոքրերը մեծերից յետ չելին ընկնում. նրանք եւ երին սովորում:
- Վանդան նրանց բոլորին հավաքեց:
- Պետք եւ պինդ կենար, ահա թե ինչ... վորովհետեւ... գաղաններ են նրանք, իսկ գաղաններին չի կարելի մոռ թողներ: Բոլոր ուժով նրանց կզիմազբենք:
- Անե՞նք.
- Անե՞նք. լավ խմացեք, վոր հանար բան չի:
- Մի անգամ, ակումբում նստած ժամանակ տղերքը հարցրին Վանդանին.
- Վանդա, իսկ ինչի համար ենք մենք կռվելու.
- Ամեն բանի... մեր հանքերի:
- Զգրուխտի համար.
- Այս.
- Եդ քարի կտորների համար.
- Այս, քարի կտորների.
- Այս, զբող տանի, քարի համար....
- Ինչներիս եւ պետք, թող տանեն: Մենք բուրժուլ-ներ ենք, ինչ եւ:
- Բարժույները մատանիներին են հազցնում զմբուխուները, իսկ մեզ մատանի պետք չի:
- Թո՞ղ տա՞են.
- Վանյան ուզում եր պատասխանել, բայց ուժը չպատեց: Զեր իմանում ինչից սկսի և վորտեղ վերջացնի: Վճռեց հորը մի լավ հարց ու փորձ անի և հետո տղերանցը բացատրի:
- Պատմեց հորը, իսկ հայրը նրան ասաց:
- Զգրուխտը, զա մեր շենքի փոքրիկ քարն եւ յեթե եղ տանք նրանց, զբա հետ պետք եւ ամեն ինչ տանք:

— Ինչու, — հարցրեց Վանյան.

— Ինչու, դեռ լսիր! Զմբուխարը և ուրիշ քարերը շատ թանգ են: Մեր չորս կողմը գտնվում են բուրժվաներ: Նրանք ամեն ինչ ունեն՝ հաց մեքենաներ, չիթ, կոշիկներ. նրանք սիրում են քարերը: Տեսել ես ինչպես մեր տերերի աղջիկները վիզն են զցում զմբուխաները:

Հավաքենք այդ քարերը՝ տանք խորհուրդներին. Երանք կծախսեն բուրժվաներին, փող կատանանք և այդ փողով հաց, մեքենաներ կառնենք և մեր տնտեսությունը կվերականգնենք, իսկ յեթե մենք քարերը տանք գեներալներին, նրանք այդ քարերը կծախսեն արտասահմանում, այդ փողերով ուրիշ յերկրներից զինվորներ կվարձեն, կավելացնեն իրենց զորքը և իրենց սվիններով մեզ կվոչնչացնեն: Եթի կապրենք արագես, ինչպես առաջ եյինք ապրում: Հիշիր՝ զմբուխար մեր շենքի փոքրիկ քարն ե:

— Զմբուխար՝ այդ... կրկնում եր Վանյան պառկելով քնելու, վոր վայր պատմի յերեխաներին: Իսկ յերազում զմբուխար տեսավ: Փոքրիկ զմբուխար պատվում եր և քանի գնում մեծանում եր, իսկ յերբ զմբուխար պատվելուց դադարեց, գույնը փոխեց, հետո դառավ թափանցիկ և Վանյան տեսավ նրա մեջ իր ընկերներին: Տեսավ՝ ինչպես հայրը քարերը վերցնում եր տղաներից և տալիս խորհուրդներին, վորոնք այդ փողով մեքենաներ, հաց և զանազան մթերքներ եյին առնում: Գործարաններից նորից սկսեց ծուխ բարձրանալ, իսկ տանը ճաթի (յեղիպտացորեն) ու գարու փոխարեն իսկական հաց յերևաց:

Գոհ եր Վանյան. քնում եր հանդիսատ որտով: Մի անգամ նա յերազում տեսավ մի մեծ կտոր զմբուխար, զմբուխարի մեջ լենինի դեմքը. Ժպտում եր լենինը, ցուց

Գը տաղիս Վանյային թե ինչեր կարող են անել զմբուխտի կտորները. հատկացավ Վանյան, վաղեց դեղի Լենինու ու ասաց.

— Գիտեմ, բնկեր Լենին, գիտեմ. կկովեմ. Այս Տղաներին ել կառեմ... Հայրը թափ եր տաղիս Վանյայի ուսը. — վեր կաց. ինչ ես զոռում. տղերը յետելիցդ են յեկել.

Վանյան բացեց աշքերը, տեսավ հորը.

— Հասկցավ... — ասաց նա.

— Ի՞նչը.

— Դե են, զմբուխտը... գիտեմ ամեն ինչ. Լենինը ցույց տվեց.

— Ինչ Լենին. եհ, գու, տղա, քնով ես անցել. վեր կաց, թե չե ընկերներդ կզիկեն. այ գու քնկոտ...

Վանյան վեր կացավ, թել խմեց ու մտածում եր տեսած յերազի մասին. Գործի զնաց, բայց յերազում տեսածն աշքերի տառջն եր. Յերբ իրենց վաշար հավաքվեց ակումբում, Վանկուշան վորոշեց պատճել յերազը.

Տղաներն ուշիւուշվ լսում եյին, և յերբ Վանյան վերջացրեց, վեր կացավ Մոտկան, ուղղեց փողկապն ու ասաց.

— Դե վոր Լենինն ե, զրուստ ե. եդ վոշինչ, վոր յերազում յես տեսել. ահա նրանց, — ասաց բառնցքը ցույց տալով, — իսկ մենք... կմեռնենք հեղափոխության համար...

— Պատրաստ, կահչեց նա վոդեորված.

— Միշտ պատրաստ, — կահչեցին տղաները սիաբերան. Այնուհետեւ ել վոչ վոք չեր հարցնում զմբուխտի մասին՝ բայց բոլորն ել գիտելին. — սա մի քար ե, վոր կոգնի ժեր կրանքն ամբացնելու.

V

Յերկար չտեսեց. թշնամին փրա տվեց. տաք արձիճն համբուրեց. Ապալիխի խրճիթները.

Ապակիները ճաքճաքում եղին.

Գյուղը կծկվեց. Խատարկվեց. Վոսկե ռւսդիրներն*) յերեցին տեղ-տեղ. նորից մի պայթուն.

Եթի մի անգամ սուլեց շշակն ու լոեց. և յերբ լուսաւցավ, շատերն ել չտեսան իրենց հոյրերին, վորդիներին:

Գյուղում շրջում եյին սպաներն ու վնասը տղամարդկանց. մալքերը լուռմ ելին. իրենք ել չկտեյին.

Գնացել են գիշերն ու—չկան.

Ապաները զայրան ում եյին սպանում. քաշում եյին ատրճանակները, բռնում ճակատներին. սակարն բան չկարողացան իմանալ.

— Զգիտենք, — այս ելին լսում բոլորից. վորձում եյին համոզել, գրավել:

Զմբուխտի կտորներ ու Նիկոլայնկաներ**) ելին ցույց տալիս. բայց իզուր, ելի նույն պատասխանն եր.—

— Զգիտենք.

Դիմեցին տղաներին. վախեցնում եյին, պարզեներ եյին խոստանում՝ բան դուռս չեկավ.

— Ահա ձեզ, չեք ուզում, — ասում եր Վանլան մըտքում, յերբ մոտենում ելին սպաները.

— Ահա ձեզ...—մտածում եյին տղաները:

Յերբ տեսան, վոր խոստումներն ու սպանալիքներն անզոր են, հրամալեցին.

*) Յարական զինվորների զգեստավորումն—նշաններ ու սերին:

**) Յարական թղթադրամներ:

— Տանջել բոլորին. — Ու սկսեցին... աղաների հառաշանքները բռնել եր վաղջ զրուղը. հեծում ելին նրանք, բալիս ելին քուղերն ու մազերը:

Ճիպաների հարգածի տակ Վանկան ու ընկերները մտածում ելին.

— Չենք տախ. Լենինը թույ չի տալիս Ահա ձեզ: Պատժից հետո աղաները չելին կարողանում շարժվել տեղերից. մայրերն ու քույրերը առն տարան նրանց: Մի շաբաթից տվելի պառկեցին անկողնում, տանջվում ելին ցավերից, բայց ուրախ ելին, վոր վոչինչ չասացին: Վանյախի լերաղը լուկ ելին հիշում, իսկ կարմիր հետախոռ լուների պատվամն ամուռ մեխվել եր նրանց հոգում.

— Գու բանվորի և զցուղացու բարեկումն ես.

— Դու հեղոփոխության պաշտպանն ես.

Այս պատվերներով նրանք պառկում ելին մտրակների տակ՝ այս պատվերը սրառում կմեռնեն, բայց զմբուխու չեն տուլ.

Առողջանալուց հետո աղերքն ասացին Վանյախն,

— Կառավարիչն յեկել եր. նալում եր հանքերին ու թունդ հայնոյում.

— Հետո՞...

— Մենացած բանվորներին հավաքեց, ճառ եր ասում.

— Գնացեք հանքերն աշխատելու, ասում եր. լես ձեզ կոգնեմ, ոսճիկներդ կավելացնեմ.

— Հետո՞, հետո՞.

— Հետո ինչ. աղերքն ասում են. եսպես ել լավ ե, չենք գնա, իսկ լերը տեսավ ճար չկա, սպառնում եր, թե՝ այ Փրանսիացիք կ'գան, ձեզ կուտացնեն. — աղերքը, — թե՝ թող զան օքրվեցին. իսկ հանքը լցվում, հա լցվում ե, զին.

վորներ են բերել—չեն՝ իմանում՝ վոնց բաշեն ջուրը.
— Բնկերներ, մենք պետք եւ ուժեղացնենք մեր
կազմակերպությունը, բայց ցույց շառնք, վոր վաշտա-
լիններ ենք, թե չե՞ հոգիներս կհանեն. դւրք Վասկա ու
Մուսա, հետհեցեք՝ վճրաեղ՝ ինչ պահաներ կան. զրե-
ցեք. մեկ-մեկ քաղաք գնանք, գուցե մի նոր բանի հոս-
առնենք.

Գործը յեռում եր ամեն մեկս իմանում եր իր բանը.
Կարճ ժամանակում իմացան՝ ուր եւ պահակատեղին, ովքեր
են պահակները:

Կարմիր փողկապները պահեցին, շրջում եյին այն
պես, իբրև անգործ ու թափառաշրջիկ, բայց աչքի տակով.
Նայուա եյին ինչ կաչկա. իսկ զիտելու շատ բան կար.

Գիշեր-ցերեկ զորք եր զալիս. թնդանոթների ձայնը
հեռու-հեռու եր գնում. ասում եյին՝ սպիտակները բռնել
են Վոլգայի ափերը. խոսում եյին կազմանի, Սարատովի,
Յարիցինի մասին, իսկ հարավից, իբր թե՛ մի ուրիշ գե-
ներալ եւ զալիս, քաղաքներ եւ վերցնում.

Վանյան մի քարտեղ գտավ՝ իրիկունները իրար գլխի
հավաքված, լուրեր վորսալով վնասում եյին քարտեղի
վրա քաղաքները.

Յարիցինի, Խոստովի, Խարկովի ու Կուրսկի վրա
սև զրոշակներ եյին ցցել. մատցել եր մի փոքր տարածու-
թյուն, Մոսկվայի չորս կողմը՝ Վանյան իր ձեռքի ափով
ծածկում եր այդ տարածությունը.

— Տես, ինչ փոքրացել եւ ՌՍՖԻՀ.
Մուսաստանի, Սոցիալիստական. Ձեղերատիվ՝ Խորհր-
դային Հանրապետություն).

— Ե, ինչ, աղեք. միթե վերցնելու լին բոլորը.

— Ավ զիտե, — ասում է յին տղերքը.

— Վոչ, չեն վերցնիլ. հիշաւմ եք, ինչոք ն եպուննը*) մոռեցել եր Մոսկվային, վերցրեց Մոսկվան, սահման Կուտաևզովը չվախեցավ ավեց Մոսկվան ու հետո ել դիմին ավեց, — յետ վերցրեց. հիմա ել կտան, ու հետո ելի կլուն.

— Ավ կիուի.

— Ա՞վ. Եեւինը.

Աշքները փայլում ելին ուրախությունից. հավատում ելին, զուր չեք, վոր հայրերը չեն վերադառնում. — Մոսկվայի պատերի տակ ջարգերու յեն սպիտակներին.

Մի ուրիշ լուր ել տարածեց՝ պարտիզաններ**) են լերհացեր, ծածկվում են լեռներում, հարձակվում են պահակների, ւերկաթռողինների վրա, պալթեցնում են կամուրջները, սպանում պահակներին:

Տղաները շարժվեցին. մեկ նույնիսկ առաջարկեց.

— Փախչենք.

— Ուր

— Միանանք նրանց.

— Ինչու.

Այ թե ինչ, հետախույզներ կլինենք. չե վոր ուսում ունենք. պարմանանշանները դիտենք. Այս միտքը դուք յեկավ, և ելեքտրական հսանքի նման անցավ ամրող վաշտը:

*) Թրանսիբական կալսր, վոր 1812 թ. արշավեց Ռուսաստանի վրա:

**) Կավողների խմբակներ, վորոնք ընդհանուր ծրագիր և ուրիշ խմբակների հետ կապ չունեն. պարտիզանական ասում են զլիսավորապես ապատամբական խմբակներին:

— Փախչենք պարտիզանների մոտ: — առաջ աղերք-
են, Վանյան տասնուշորս տարհ կան և իսկ ամենից փոքրը
տասներկու:

Ժողով արին, ինչպես փախչեն, մեկմեկ թե բոլորը
միասին: Կովի բանվելիս, միասին կովելը ճշգտ ե.

Վորոշեցին: — վախչել միասին, վաշտով: Վանյուշան,
իրքեա ավագ, վորոշեց պարտականությունները:

Վասկա ու Սեմկա, հավաքեցեք բոլորի դանակ-
ները, սրեցեք, պատրաստեցեք. Գրիշա ու Մոտկա, փայտ-
նոցները ման յեկեք, բոլոր թոկերը թոցրեք:

Կաթսաների մասին զու, Կոլկա, կհողասու Դե շուտ,
գործի, թոկեր ելին վոլորում, մեշոկներ կարկատում,
զանակներ սրում, գույլերը պատրաստում:

Մի շաբաթ անց բոլորը պատրաստ ելին.

Դիշերը վաշտը ճանապարհ կնկնի.

Գիշերապահներ ունելին: ճետախույզները նշանակ-
ված են:

Շուտ անցիր, ցերեկ, վրա հասիր գիշեր...

VI

Ամբողջ որը տղաները պատրաստվում ելին. դժվար-
եր. վոչ քարտեզներ ունելին, վոչ ել կողմացուց կտր.
հիշեցին՝ ինչպես պիտի գտնեն լերկի կողմերը՝ Մեծ-
Արջի և Բենուալին աստղերով, միշտ ծառի հարավային-
կողմը սողացող մըջյուններով, պետք ե հիշել, վոր մե-
կուսացած ծառերի ճյուղերի մեծ մասը հարավային կող-
մում լեն լինում:

Իրիկունը, յերբ ամեն ինչ պատրաստ եր՝ ճանա-
պարհ ընկան: Գնում ելին իրար յիտելից, իսկ առջեկից՝

հետախույզներ, վորոնք բռւի կանչով նախազգուշացնելու
ելին ընկերներին վասնդի մասին:

Հետախույզ նշանակվեցին Վանյան ու Մատվեյը, վո-
րոնք մի վերստ առաջ ելին գնացել: Բանջարանսցների ցան-
կապատերն անցնելով, նրանք մտան փշատերի անտառը:

Լուս եր. մութն իջնում եր անտառի վրա. ծառերի
գաղաթները հետզհետեւ ձուրվում ելին, բները աչքից չքա-
նում. պահակները ճանապարհը կտրելով սարբակի դայ-
լայներով սիրո ելին տալիս ընկերներին: Վերջապես
վորոշեցին հանգստանալ:

Հավաքվեցին, պառկեցին ծառերի տակ, վառները վեր
ցցած. յերկար ժամանակ լուս ելին, նայում ելին ասո-
դաղարդ յերկինք ու մտածում անցած ճամբի մասին:

— Կտրեցինք, ութ վերստ անցած կլինինք.

— Զե՞ մի ութ վերստ, հազիվ հինգ վերստ ենք ան-
ցել...

Ինչ կենելի հա, — վրա բերեց մեկը.

— Են զու փախեռոտ. մոռացմա՞ր՝ ո՞վ ես: — Կարմիր
հետախույզը, վոզչ զիշերն ե անցնելու առանց հան-
գըստի:

— Դե լավ, ինչ զբա ժամանակն ե, — ասաց մի ու-
րիշը. բանն այն ե՝ յերբ պիտի մերոնց համնենք:

— Յերբ. յերեկ յերեք չորս որից.

— Յերեկչորս, չե մի հինգ վեց, յոթ ութ որից:

— Հա՛, հա՛, հա՛, — բըրջացին մի քանիուր:

— Հա, հա, հա, — կրկնեց արձագանքը:

— Սուս, սատանի ճուտեր, — զոռաց Վանյան. ինչ եք
հոհում, թե չե՝ կլսեն:

Պատանիները լոեցին. մտածում ելին տան մասին,
թե ինչ ե սպառնում իրենց.

— Կանկուխա, այ Վանյուխա, իսկ ինչ ենք անելու նրանց... պարտիզանների մոտ.

— Թնդանոթների տակից գորտերին ենք փախցնելու... քանի ասենք, չես իմանում ինչ ե.

— Բա ինչ. կրակելու յենք.

— Այս կրակելու յենք, մի բան ել ավելի.

— Եղ հո դժվար չե. զորսի գնալիս քիչ եմ կրակել. ու վոչ մի անգամ վիստ չեմ անցկացրել.

— Այ ետպես ել հնտեղ. ամեն մի կրակոցիտ մի սպիտակ եռ պառկեցնելու. մի կրակոց—մի սպիտակ:

— Դարդ մի անի. կջարդեմ վոնց վոր բոխին. այ, եսպես կդիզեմ.— Կոլկան բարձրացավ, ցուց տվեց ձեռքով ու ելի պառկեց.

Տղաներն ականջնելը սրեցին. — ճքճքացին ճյուղերն ու խշշացին տերեները. մի գորտ կռկռաց. կատուների նման իրար գլխի հափաքվեցին: Խավարի միջից ցոլացին աչքեր՝ ճքճքացն ու խշշոցը սաստկացավ. — գալիս են, — մտածեց ամեն մեկն ու սրեց ականջները. նորից մի ձախ:

Ցեվ ամբողջ շղթան շշնջաց. լսիր հրամանատարին... հրամանատարին:

Խավարում շարժվում են ստվերներ. առաջ են գալիս:

«Սրանք ել մեզ պես կորդել են ճամբեն: Սպիտակ-ներ չեն. նրանք պահակներ ունեն. սրանք մոլորվել են, թե մեզ են հետապնդում: Բայց գնում են դեպի Ռպալիս ուրեմն՝ հետապնդողներ չեն: Զինիք մերոնցից են», — մտածում եր Վանյուշան ինքն իրեն: Իսկ յերբ ստվեր-ները մոտեցան, Վանյան կանչեց.

- Կանգնիր, մվ եւ
Առվերները վայրկենապես մտան ծառերի յետեր,
— Իսկ զուք մվ եք.
— Ձեր ինչ զործն եւ ասացեք՝ ո՞վ եք, թե չե կկրա-
կենք, — պնդում եր Վանյան, ճետն ել մտածում. «Ախ, թե
մի հրացան կլիներ կտմ մի տարբաննակ»:
Դիմացիները պատասխանեցին.
— Մենք ել կկրակենք, ասացեք՝ զուք ո՞վ եք.
— Այ քեզ ովն. — մտածում եր Վանյան.
— Հապտ — ուրիշ կերպ փորձեմ:
Ճանապարհորդները փափսում են, մեկը՝ մոկին՝ լսիր,
ծանոթ ձախն եւ շլինի Ռոպակիսի աղերանցից են, մեր
զմբուխապօրներից: Վանյան ինքն իրեն հավաքեց ու զո-
սաց. — Պուրս յեկեք թե չե...
Եյ, վաշտ, պատրաստ...
— Լսեք, տղերը զուք Ռոպակիսից չեք, — հարցը եց
մեկը.
— Են, քո ինչ զործն եւ
— Ցես ել եմ զիուղից.
— Զես խափի, տչքերս թող մի փշի, — ասաց Վան-
յան իր սիրած առածը.
— Հենց նա ինքն եւ, — ասաց մյուս ճանապարհորդն
ու առաջ յեկավ.
— Դժու յես, Վանյուշա, հարցը եց նա.
— Վանյան շշմեց, մլուսներն ել շունչները բռնեցին.
— Հոյ, յես եմ.
— Դե մոտեցիր, մվ են ընկերներդ
«Ո՞վ պիտի լինի,» — մտածեց Վանյան ու մոտեցավ:
— Վահ, հալրիկ, ինչպես...

«Ի՞նչպես» արձագանքեց անտառը.

Հայրը պինդ սեղմել եր Վանյուշին.

Պատանիները զբկախառնվել ելին մըուսների հետ-
լսվում եր միայն—«Ես ինչ լավ յեղավ»:

— Դե բավական ե. մոտեցեք տեսնենք ուր եք
զնում, տղերք:

— Պարտիզանների մոտ.

— Ոհո, մենք ձեղ չենք թողնիլ.

— Ի՞նչու...

— Վորովինեաւ մեզ պետք եք. նստեցեք ու լսեք-
վանյուշայի հայրը պատմեց, ինչպես նրանք թագնվել ե-
լին, ապա քաղաք անցել Կոփիլը ձգձգվեց. պետք ե թի-
կունքից խմբել թշնամուն. Պետք ե կազմակերպել բան-
վորներին: Կուսակցության կոմիտեն վորոշել ե այս շըր-
ջանում ընդհատակյա աշխատանք տանել:

— Պետք ե տպարան հիմնել, քաղաքում այդ անհնար-
ե. պետք ե հիմնել հանքերում:

Ո գալիխում: Այժմ պետք են կարմիր հետախույզներ,
ուստի և տղաները մնալու յեն:

— Մենք պատրաստ,—կանչեցին պատանիները.

— Զկան պես համը, —կրկնեց հայրը:

Ցեթե մի բան թոցըել եք բերաններիցդ—վայ մեզ-
մօնք կորած ենք ու հեղափոխությունը վտանգված:

— Հասկանում ենք, խոստանում ենք:

— Կտեսնենք, ինչպես եք պահում ձեր տված խոս-
տումը. իսկ այժմ—առաջ դեպի Ռազմիկ. վերցրեք զեն-
քերը:

— Ի՞նչ զենք.

— Այն, ինչ վոր կրակելու ելիք՝

— Մենք հենց այնպես, ուզում ելինք վախեցնել.

— Կեցրեք, բաջերս... հա հա, —քըզըում ելին նախակին «թշնամիները», ու նրանց արձագանքում ելին տղաներն ուրախ ըրթիջով:

— Միշտ աչքարաց ու հնարազետ յեղեք.

— Առաջ.

Նպր պահակների առաջնորդությամբ շարժվեցին դեպի Ռազմիխ:

Գյուղը հովտումն եր, իրենց գիմաց. պլազում ելին տիս ու այն տան աղոս ճրագները. Արևելքը շառագույնն լուսարացը տեսնելով ճամբորդները քաղերն արագացրին: Բանջարանոցների միջով սուս ու փուս անցան ու հասան Վանյախի խրճիթը:

Դիտեցին հանքահորը, Վանյան առաջնորդում եր, մյուսները—պահակներ ելին՝ զտան մի խոր միջանցք. նեղ եր, պետք եր սողալով անցներ:

Դատարկ արկղները իջեցրին՝ սեղան ու նստարան սարքեցին:

Պետք ե տառեր բերել բաղաքից:

Տղաները գործի անցան:

Զամբյուղի մեջ խոզակաղին ելին լցնում ու հայդե, քեղպի քաղաք:

Նշանաբանով վոր միայն իրենց ու կենողներին եր հայտնի՝ մի տուն մտան.—ամեն ինչ պատրաստ եր. վերցրին բեռնած զամբյուղն ու ճանապարհ ընկան արշալույսին:

Յերեկն անտառում հանգստացան. լուռ ու մուշջ յերեկինը ելին նայում ու աչքերի տակով գամբյուղին՝ ուր դարսած ելին տառերը, վորոնք շուտով ճիշտ խոսքն ելին լերեան բերելու:

Միքանի անդամ քաղաք գնալ-դալով, ձեռք բերին
ամեն ինչ:

Կարմիր հետախույզների ութնյակը կարճ ժամանա-
կում մի մեծ զործ կազմակերպեց: Հանքահորն իջնում եր
միայն հայրը իր յերկու ընկերներով:

Ցերք տպարանը պատրաստ եր, նրանք իջան ու ան-
հայտացան. միայն զիշերներն ելին դուրս գալիս՝ մաքուր
ող շնչելու: Մեկ-մեկ ել Վանյան եր իջնում, ուտելիք ու
ջուր տանում կամ նոր լուրեր եր հազորդում:

Ցերք ամեն ինչ պատրաստ եր, տպարանն սկսեց աշ-
խատել:

Առաջին թռուցիկները, վորոնցից թարմ ներկի հոտ եր
փչում, ցըմեցին Ռապալիխում.

Գորշ ցանկապատերը ծաղկեցին – այդ զիշեր տղաները
շրջում ելին վրձինն ու սոսինձը ձեռներին և կպցնում
ելին թռուցիկները:

Այդ թերթիկներն ասում ելին. —

— «Ընկերներ, բանվորներ ու գյուղացիներ. նորից
կալվածատերերի ու կապիտալիստաների լծի տակ, նրանք
գրավեցին մեր հողերը, գործարաններն ու հանքերը»...

Կարդացին ու համոզվեցին — այստեղ հարազատ ձեռք
ե աշխատել, բանվորի ու գյուղացու ձեռք:

Ցեվ այդ վոգեորող խոսքը անցնում եր տները, հան-
քերը:

Ամբոխի մեջ տեղ տեղ կանգնած ելին տղաներն, և
ուրախ ժպիտը փայլում եր նրանց դեմքերին: Մտածում
ելին. «Այ քեզ ճշմարիտը, արդարը, սպասեցեք դեռ շատ
ճշմարտություններ կտեսնեք»:

Թերթը հեղեղեց շրջակալքը, հասավ քաղաք.

Թոռոցիկը դարձավ լրագիր՝ «Կարմիր Մարտիկ».

Թերթը շարելուն սղնում եր Վանյուշան, և նրա շարժած առաջին բառն եր,

— ԵԵՆԻՆ.

Յերբ նա տպեց այդ բառը, թղթի վրա դուրս յեկավ
ԵԵՆԻՆ.

Հայրը ուրախացած բացականչեց.

— Լավ ե. սակայն ուղղիր: Տառը շուռ տուր.

Վանյուշան ուղղեց.

Բանվորների ու գյուղացիների մասին տպված եր մի հողված, փորի տակ ստորագրությունը Վանյան եր շարել:

— ԵԵՆԻՆ.

Բանվորները կարգում եյին ու իրար ուրախուրախ
տառմ,

— ԵԵՆԻՆ-խելոք ե. մեր հարազատն ե, մեր ըն-
կերը:

Կային և այնպիսիները, փորոնք ատամներն եյին կը ճ-
տացնում, յերբ կարգում ելին այդ անունը —

— ԵԵՆԻՆ.

Հինգ տառ ե, — մտածում եր Վանյան, — բայց ինչ-
պիսի մեծ նշանակութիւն ունի:

«Կարմիր Մարտիկը» քաղաք ընկավ ու իրարանցում
դցեց հակա-հետախուզների շարքերում: Հատուկ ջոկատ-
ները ցըլեցին ամեն կողմ՝ խռովարաներին ու կարմիր
շարագործներին փորսալու:

Բայց իդմւր. ո՞վ պետք ե ասեր: Քչերը գիտեյին՝
ովքեր են զրանք. իմացողներն ել լոռում եյին: «Կարմիր
Մարտիկը» աճում եր, նրա ճշմարիտ խոսքը գնում եր
հեռու, հեռու.

Մի անդամ Վանկուշան ու Մատվելը քաղաք ելին
զնում. զսմրյուղում կաղիններ եյին լցրել, իսկ տակին՝
լրագիրն ելին դարսած։ Անցնում եյին անտառի միջով,
Հեռվից փայլում ելին քաղաքի դմբեթները։ Հենց ուզում
եյին անտառից դուրս գալ—սև ու կարմիր ուսաղիքներով
գերկու զինվոր հանդիպեցին։

Կանգ առ. ինչ եք տանում.

Վանկան իսկույն վրա բերեց.

Թեոփ, կաղին չեք ուզում. թարմ, լավ ընկույզ-
ներ. համը բերանումդ կմնա.

Ի՞նչ...

Դե կաղին, ելի՛. առեք, մեր գործը յուա տարեք։
Տես մի՛ ինչ կաղին ե.

Նա կճպեց մի կաղին և ցույց տվեց շաղանակագույն
միջուկը.

Զինվորը վերցրեց. ծուլությամբ կծեց միջուկը, ծա-
մեց և փնթփնթաց.

— Լավն ե, —վերցնենք, տանենք հետներս, —ասաց
նա ընկերոջը.

Ուժ տանել, ուր, —մտածեց Վանյան վախեցած,
բայց ցույց չտվեց իր կտսկածը, արագ-արագ վրա բերեց՝

— Համեցեք, եժան ե. հատը մի լիմոն*)

— Վորտեղ եք ապրում

— Դունդուկյան փողոցում.

*) Մինչև չերվոնեցների անցնելը դրամների արժեքը շատ
անկանոն եր, ուստի և թղթադրամների զինը շատ բարձր եր,
կային նույնիսկ միլիոնների հասնող թղթադրամներ. վորոնք
առկայն գնելու չնչին արժեք ունելին. «լիմոն» ասում եյին միլիոնի
փոխարեն։

- Այ տղա, այնաեղ արդպիսի փողոց ել չկա.
 «Կորանը», — անցավ Վանյալի մաքով.
- Ե՞ս, զու լել... ասաց Վանյան ուշքի զալով.
- Այ, հրեն, յեկեղեցին, տեսնում ես.
- Տեսնում եմ, իհարկե.
- Այ, յեկեղեցուն չհասած, գարձիր աջ, հետա-
 ձախ, — ու մի քիչ զենը մեր տունն ե, ելի...
 — Դե, լավ, ճղի.
- Զինվորը բռնեց կաղինը, լցրեց բոլոր գրապանները.
- Քեսի, բա փողը.
- Այ զու լակոս, այ քեզ, տեսնել ես, — ասաց նա
 բուռնցը ցույց տալով:
- Զնանդամ քո աված փողերը, — փնթփնթաց Վան-
 յան ու գարձավ ընկերոջը.
- Դե, թոփ, Մատվեյ, շուտ գեպի տուն:
- Հասան. զինվորները չեյին յերեսում: Կամաց անցան
 փողոցով, կտրեցին մի ուրիշ փողոց ու կատվի պետ
 զգույշ—ներս ընկան մի հայաթ.
- Յերբ Վանյան վերջացրեց ու դուրս յեկավ, դիմացի
 մայթից յերկու անծանոթ մոտեցան նրան. Վանյան գլխի
 ընկավ, վոր լրտեսներ են՝ սկսեց դանդաղացնել քալերը.
 Մատվեյը չկար, ուշացավ. յերբ դուրս յեկավ, Վան-
 յան բավական հեռացել եր.
- Մատվեյը նկատեց, վոր Վանյաին հետապնդում են.
 Վանյան մտածում եր—ինչպես հասկացնի Մատվեյին:
 Հիշեց նշանտուքը. ել վոր որվա համար ե.
- Յերբ դուրս յեկավ անտառի ճամբին, սկսեց ձեռները
 բարձրացնել—իջեցնել, իբր թե մարմնամարզություն ե ա-
 նում, և այդ նշաններով հասկացը եց.

— Զմուռենաս. յես սրանց կտանեմ. դու կարճ ճանապարհով անցի ու մերոնց նախազգուշացը ու:

Մատվեյը գլխի ընկավ, իջավ ձորը ու կարճ ճանապարհով զյուղ հասավ, Վանյան աջ եր բռնել, զնում եր ու նայում-ուր են իր ուղեկիցները. հանկարծ նկատեց, վոր շատ ե հեռացել և հետապնդողները հեռու բլրի վրայից հեռագիտակով նայում են դեպի իր կողմք:

Վանյուշան իջավ ձորն և մարդագետինն անցնելով դուրս լեկավ զյուղի ճանապարհը.

Յերբ նա զյուղ հասավ, Մատվեյն արդեն այստեղ եր և նախազգուշացը եր ընկերներին:

Գիշերն հավաքվեցին խորհրդակցելու՝ փնչ անեն, վտանգը կանխելու համար. թագյնեն տպարանը հանքահորում և իրենք հեռանան, թե մասն գետնի տակ և նոր անցք բանան դեպի միջանցքը: Հանկարծ մեկը ուժեղ խփեց դուանը. բոլորը վեր թռան, ձեռները տարան դեպի ատըրճանակներն ու հարցըին:

— Ո՞վ ե.

— Մերոնցից ե. Յես եմ, Դեմենտին,—պատասխանեց ձախնը դռան յետելից:

Բացին. Ներս մտավ քաղաքից յեկած մի բանվոր. նա ալլայլված եր, սփթրնած և շունչը կտրվելով ասաց.

— Ընկել ենք ծուղակը. ընկերները բռնված են. «Մարտիկը» գրավել են. յես հազիվ փախա. վաղը, յերեխ այստեղ կլինեն.

— Ի՞նչ անել.

— Թաղել տպարանը. փախչել Շարտաշսկայա, այստեղ ապահով ե, պարտիզաններն ել հեռու չեն:

— Խելոք առաջարկ. շուտ իջնենք հանքահորը. վեր-

ցրեք զենքերդ. Մատվեյը թող պահակ կանգնի, բոկ դու, վանլուշա. մեկ հետ չեկ:

Կամացուկ հորն իջան. քլունդները թեթև խփեցին, պոկեցին շերտերն ու անցքը փակեցին:

Մինչեւ վերջացնելը Վանյան մի անդամ բարձրացավ.
Հը, Մատվեյ, վաս են գործերդ:
Վոշինչ. լուսանում ե. զուցե վանդն անցել ե և
ել չեն դար.

Դու Մոտիա, այ են ճամբին նայիր, եղ ե նրան ց
ճարեն... Վանյան հանկարծ լոեց ու չոեց աշըերը:
Սա ինչ ե, Մատվեյ, ասա ինչ ես տեսնում:
Հեծելազորն ե. յերեի նրանք են... զալիս են.
Դե շուտա.

Վանյան տենդային արտգութբամբ հանեց ծոցատետը, մատիան ու գըեց.

«Մոտենում են ձիավորներ, յերեի նրանցից են, յես
քաշում են թոկը: Անցեք միջանցքն ու փակեցեք անցքը:
Պատախանեցեք — թոկի ծայրին. Վանյա».

Եվացրեց գեպի հորը. Պատախանեցին: Վանյան վա-
թաթեց թղթում մի քար, զցեց ներքե, սպասեց. նորից
շվացրին հորի Դ. Մատվեյը հետ քաշեց թոկը. ծայրին
թուղթ եր կապած. կարդացին:—

«Հասկացանք. կամրանանք սիջանցքում. վողջ-վողջ
չենք հանձնվիլ»:

Վանյան ու Մատվեյը կծկեցին թոկը, դցեցին հա-
րկան փալտնոցն ու ծածկեցին աղբի տակ:

Վագեցին դեպի տուն:

Թիչ անց ձիավորները գլուղ մտան:

VIII

Հեծելագորը շղթաւեց զրուդը՝ Աչալուրջ հետեւմ ե-
նյին ներս ու դուրս անողներին.

Խուզարկում ելին աները, տակն ու վրա ելին անում
ամեն ինչ:

Նրանց հեռանալուց հետո տունը ավերակի յեր վե-
րածվում, կարծես ամեն ինչ գլխիվայր եր շուռ տված.
իսկ յերկաթապատ ծաղկավոր մնդուկները զատարկվում
եցին խուզարկության ժամանակ. Նրանց միջից կտորեղենը,
սփռոցներն ու շալերը անհետանում եղին...

Հերթը հասավ Վանյալի տանը.

— Ահա, այ թե վորտեղ ե.

Վանյուշան չկարողացավ տեսնել՝ ո՛վ եր այդ ասողը:
Նրա վրա հարձակվեցին, բռնեցին ու քարշ տվին:

Մայրը վրա վագեց, ուզում եր պաշտպանել, չթող-
նել, վոր տանեն. սակայն չարաղեմ սպան թափահարեց
ձեռքն ու տարձանակի կոթով խփեց մոր գլխին. Մայրը
ճշաց. աշքերը դուրս թռան կոպերից. ցնցվեց. ընկավ
հատակին. Արյան ալ շիթերը նել կեցին հատակը:

Վանյուշալին թերին վարչություն. Բազկաթոռի վրա
նստել եր հրամանատարը, սաթե ծխամուճը բերանին,
բեխերն եր վոլորում. Նրա կողքին կանգնած ելին յերկու
քաղաքացիներ:

— Վանյան նալեց ու ճանաչեց յերեկվա հետապնդող-
ներին:

Մոտեցը ին. վաշտապետը ակնոցները քթին դրեց,
վուտից գլուխ չափեց Վանյալին և դիմելով մյուս յերկու-
սին, հարցը եց.

- Առ յե, այնպես չե՞.
- Ճիշտ այլպես, ձերդ պայծառափացություն.
- Մոռեցիր, լսիր. մենք գիտենք, վոր զու թռուցիկ-ներ եցիր աարածում. Գիտեու ինչ և նշանակում այդ:
- Գիտեմ, — համարձակ պատասխանեց Վանյան, կար-ծես նրան հարցնում ելին զյուղի ճանապարհը.
- Դե, ուրեմն, պատմիր ամեն ինչ անկեղծորեն:
- Իսկ ի՞նչն եր ձեզ հետաքրքրում.
- Եսիր, ավել պակաս մի խոսիր, — զայրացավ վաշ-տապետը. — Մենք զիտենք, վոր զու բալշեկիլի տղա յես, զիտենք վոր հացող թագնված ե...
- Ավելի լավ. ել ինձնից ինչ եք ուղղում:
- Դու պետք ե ասես, վորտեղ ե հալրդ.
- Զե՞ վոր զուք զիտեղ, ել ինչնու յեք ինձ հարց-նում.
- Սրիկա, ասա, վմբառեղ ե հալրդ.
- Զգիտեմ, — հանգիստ պատասխանեց Վանյան. իսկ մարզում շարունակ կրկնում եր.
- «Դու բանվորների ու զյուղացիների բարեկամն ես».
- Թե չես ասիլ, քեզ կթակենք.
- Իսկ մենք չենք ուզում ձեզ պատասխանել.
- Այդ ով ե «մենք», թույլ տվեք հարցնել, — նեն-դությամբ վրա բերեց վաշտապետը.
- Մենք, կոմսունոլիներս ու կարմիր հետախույզներս, մենք չենք դավաճանիլ աշխատավոր ժողովրդին:
- Իսկ շատ եք դուք, — զոռաց վաշտապետը.
- Շատ. ամբողջ աշխարհը.
- Այս զու...քեզ ցույց կտանք վողջ աշխարհ. եսոր-եղուց Մոսկվան կվեցնենք...Ամբողջ աշխարհը...

— Վոնց չե. դորաբ փքվեց, բայց տըաքվեց.

— Ինչ ասացի՞ր, լակնա, —ու ձեռքի մարակը շըմիկաց, ձաղկելով Վանյաի այտը.

Վանյուշան հեղնելով ժպտաց.

— Ուժը ձեր կողմն եւ. հետո, —հարցրեց նա.

— Հետո —կտեսնես. եց, պատրաստ եւ.

— Ճիշտ ալդպես, պատրաստ եւ.

Դուրս տարեք.

Վանյաին դուրս տարան. բերին պարտեզը, կանգնեցրին ծառի տակ. ճյուղից կախած եր պարանը.

— Հազցրեք ողակը.

Վանյաի վիզն անցկացրին ողակը.

— Յեթե չես ասիլ, վորտեղ են ձեր բաշկեկները — կկախենք. տալիս ենք յերեք ըոպե ժամանակ:

Վանյան լուռ եր.

— Մի ըոպե...

Վանյան նայեց շուրջը. կազակներն ու սպաները խոնված ելին այդտեղ. ահա և բանվորներ — նրանց զոռով ելին բերել, վոր ներկա լինեն Վանյաի մահապատժին...

Ցերը նա աչքերը բարձրացրեց, տանիքների վրայով տեսավ իր ծանօթ անտառը հեռվում, ուր նա գնում եր կաղին հավաքելու.

Լեռան կանաչազարդ գագաթը աշնան արևի շողերից գուրգուրված վոսկեզոծվել ու ժպտում եր:

Այս ըոլորը՝ արեց, լեռները, թոշունները ասես խոսում ելին, կանչում Վանյաին:

— Ինչպես լավ ե ապրելը, տես, իսկ դու Վանյուշա, ուզում ես մեռնել. ինչու. ասա, հարանիր նրանց և դու-

կրտպրես, կաշխատես, կղզին և այդ բոլորը քեզ հաճույք կողատճառի. դե, ասա, ասա նրանց ամեն բան.

— Յերկու բովեց, — Հնչեց լոռության մեջ, ասես զանգի դոդանջ լիներ.

Վանյան սթափվեց. բերանը բաց արեց, վոր խոսի, կարծես մեկը հուզ եր տվել կոկորդը.

— Ըսկերներիդ մահը — քո ման ե, ելի պիտի մանես հանքերը և այնահեղ քո զերեզմանը զանես: Ո՞վ ես դու, աշխատավոր ժողովրդի զավակ: Ինչ են մտածում քո բախտակից ընկերները.

— Կարմիր հետախոռուզը կմեռնի, բայց թշնամու լերեսին ճշմարտությունը կասի. Հիշիր ինչ և ասել լենինը.

— Լեսին.

Նա իսքը շարեց այդ բառը տպարանում, գետնի տակ. ի՞նչ, այժմ մատնելու յե այդ տպարանը.

Մաքերը արագ սլանում ելին վանդակ զլխում, մեկը մլուսին տեղի տալիս.

— Կմառնես — ամեն ինչ կորած ե. օյն ժամանակ մահ բանվորներին. թող ապրեն կառավարչի կուշտ լերենաները.

— Յերեք...

Կարծես ելեքտրականության հոսանք անցավ Վանյաի մարմնով. նա սթափվեց, բացեց աչքերն ու դռաց.

— Սսպասեցեք, կասեմ.

— Հապա՛, — ծուխը բաց թողնելով խոսեց վաշտապետը.

Վանյուշան աչքը զցեց կանգնած ամբոխի վրա. նա տեսավ իր մոտիկներին, վորոնք ահն աչքերին սպասում ելին ու կարծես ասում. —

«Վանյուշա, միթե՞ կժամնես»...

Նրա հայտքըն ընկավ տներին, դառավ իր խրճիթը,
վորի կտրին նկատեց յեռանկունի կարմիր դրոշակը՝
աղվեսի սև գնչով. ալդ' իր վաշտի դրոշակն եր, վոր սպիտակ-
ներին զայրացնելու համար կախել եյին ընկերն երը:

Դրոշակը նոր ուժ տվեց Վանյախին, «Ճքերը վառ-
վեցին.

— Եյ, ընկերներ! — ուղեց գոռալ նա: Յեվ մտածեց. —
«մեռնեմ, բայց մեր զոծը թող ապրի»:

— Դե, վերջին խոսքդ, — կանչեց վաշտապետը.

Վանյան աչք ածեց շուրջը, մեկ ել նաև եց դրոշակին
ու բարձր ձայնով դողաց.

Լսեցեք.

Ամբոխը ցնցվեց. կազակները բարձրացան ասպան-
դակներին կանգնած. վաշտապետն աչքերը հառեց Վան-
յախի դեմքին.

Իսկ նա խորը շունչ առավ, թափահարեց գլուխն ու
բարձր կանչեց.

— Կեցցե կենինը.

— Կեցցե կոմսոմոլը.

— Կեց - ցե...

Աև մազոտ բռո. նցքն իջավ Վանյախի գլխին, աչքերը
մթնեցին. նա ցնցվեց. ողակը սեղմեց կոկորդը.

Լուռ եր ամբոխը. լուռ եր ամեն ինչ.

Յեվ միայն արձագանքն հնչում եր հեռվում, լեռ-
ներում. և այդ արձագանքն եր. —

Լե . . . Լե . . . նի . . . նի . . . ն . . . ն

Յեվ մեռնում եյին այդ ձայները լեռներում, ձուլ-
վելով մի բառում...

— Լենին.

IX

Յերեք որ կախված եր մնալու դիմակը.

— Թող տեսնեն ու սովորեն, — հրամակել եր վաշտապետը.

Սակայն մլուս որը Վանլախ դիմակը չկար. նրան գիշերը տարել ու թաղել եյին Մատվեյն ու ընկերները.

Զորքը մի շաբաթ մնաց գյուղում. տակն ու վրա առավ ամեն ինչ. հերթը հասավ հանքահորին:

Իջան յերեքը. բայց փթած սանդուխները չգիմացան և յերեքն ել ջարդուփուր յեղան հանքերի խորքում.

Ամբողջ յերկու շաբաթ բանվորները գետնի տակ եցին, առանց հացի, մնվում եյին միայն ջրով.

Յերբ զորքն հեռացավ, Մատվեյն իջավ, կերակուր տարավ նրանց.

Լեռներում արդեն կոխված սկսվել եր. պարտիզանները մոտեցել ելին: Վոլգայի ափերից նոր ուժեր յեկան, սպիտակներին քշելով գետի լեռները.

Գարնանային մի որ կարմիրներն անցան լեռներով, քշեցին սպիտակներին, և Ռուսիա նորից՝ խորհրդականավ:

Վանլուշայի դիմակը հանեցին ու թաղեցին հրապարակի մեջ տեղում.

Յերբ Մատվեյն անցնում եր իր նոր վաշտի հետ, գլուխ ելին իջեցնում պատանի հերոսի գերեզմանի առաջ:

X

Աշնանը, ցերեկով, արեի գուրգուրող ճառագալթների տակ Ռւրալը տոնում եր իր աղատազրման տարեդարձը:

Ահա պիոներներն անցնում են քաղերթով, հրապուր-
վում շինած ամբիոնի կողքով.

Նրանց կարմիր փողկապները վառվում են ամբոխի
գորշ շորերի մեջ։ Արևը գունավորում է կարմիրն իր
վոսկի—ծիրանի շողերով.

Յերբ պիոներները մոտեցան ամբիոնին, հարգուր աչ-
քեր ուղղվեցին դեպի վերեր կանգնած ծերունին.

Խորհրդի նախագահն եր այն, Վանյափի հայրը.

Յերբ տեսավ պիոներներին, պայծառացավ ծերունի
դեմքը. նա ուղղեց իր կորացած մեջքն ու կանչեց, բո-
ցավառված աչքերը ներքե հառելով.

— Կեցցե կոմսոմոլը. Պիոներներ, հեղափոխության
գործի համար պատրաստ.

Յեզ հարյուրավոր մատաղ ձայներ, գարնան շնչով
կանչեցին միաբերան.

— Միշտ պատրաստ ենք.

Զվարթազավ ծերունու դեմքը, ժպտում եր արեր,
ծիծաղում եր ալեզարդ Ուրալը:





ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



220038901

A II
3890

(204)
В. Владимирский

Шахта изумруд



ԳԻՒՆ Ե 25 ԿՈՊ.

